

Թերթ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1	Ընդհանուր տվյալներ	ՋԿ-1
2	Առաջին հարկի հատակագիծ 0.00 նիշով ներքին B1, T3, T4 և K1 համակարգերով	ՋԿ-2
3	Երկրորդ հարկի հատակագիծ 3.30 նիշով ներքին B1, T3, T4 և K1 համակարգերով	ՋԿ-3
4	B1 համակարգի սխեման	ՋԿ-4
5	T3, T4 համակարգերի սխեմաները	ՋԿ-5
6	K1 համակարգի սխեմաները	ՋԿ-6
7	Ձեղնահարկի հատակագիծ 6.60 նիշով պլաստմասե ջրի բաքով B1 և K1 համակարգերով	ՋԿ-7
8	Գլխավոր հատակագիծ B1 և K1 ներտարածքային համակարգերով Մ 1:250	ՋԿ-8
9	B1 համակարգի երկայնական կտրվածքը	ՋԿ-9
10	K1 և K համակարգի երկայնական կտրվածքը	ՋԿ-10
11	Աշխատանքային ծավալների ամփոփագիր	ՋԿ-11
12	Աշխատանքային ծավալների ամփոփագիր (շարունակություն)	ՋԿ-12

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԸՍՏ "Ջ և Կ" ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ

Համակարգի անվանումը	Պահանջվող ջրի ճնշումը մ. ջ. ս.	Հաշվարկային ծախսեր			Ծանոթություն
		մ³/օր max	մ³/ժամ max	լ/վրկ max	
I. Խմելու- տնտեսական ջրամատակարարում (B1)	14	2.7	0.86	1.31	
II. Կենցաղային կոյուղի (K 1)		2.7	0.86	2.91	

Ընդհանուր ցուցումներ

ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի մանկապարտեզի ներքին և ներտարածքային ջրամատակարարման և կոյուղու աշխատանքային նախագիծը իրականացվել է համաձայն նախագծման առաջադրանքի, ճարտարապետա- շինարարական զննարկների, գլխավոր հատակագծի, տեխնիկական պայմանների և ՀՀ տարածքում գործող շին. նորմերի և կանոնների: Նախագծով նախագծված են ներքին և ներտարածքային Ջ և Կ հետևյալ համակարգերը՝

Ներքին ցանցեր

1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)
2. Տաք ջրամատակարարում (T3, T4)
3. Կենցաղային կոյուղի (Կ1)

Ներտարածքային ցանցեր

- I Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)
- II. Կենցաղային կոյուղի (K1)

Ներքին ցանցեր

1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի խմելու-տնտեսական կարիքների համար: Ջրամատակարարումը իրականացվում է նախագծվող ներտարածքային պոլիէթիլեն ջրագծի ցանցից $d=40$ մմ պոլիէթիլեն PE -100 բարձր խտության խմելու ջրի ճնշումային խողովակներով (մուտքագծի) : Ընդունված է մեկ մուտքագծով փակուղային համակարգ: Մանկապարտեզում շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու համար ձեղնահարկում նախատեսված է խմելու ջրի $W=1500$ լ տարողությամբ պլաստմասե բաք: Ներքին ցանցը մոնտավում է $d=40$ -20մմ պոլիպրոպիլենային խողովակներով և ձևավոր մասերով: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսվում է փակող արմատուրա: Ներքին ցանցի խողովակները ցանկալի է մոնտավել հատակի շերտի և սան. հանգույցների հախճապների տակ: Ձեղնահարկում ջրի բաքը և խողովակները ենթարկվում են ջերմամեկուսացման, հանքաքամքակով:

2. Տաք ջրամատակարարում (T3, T4)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի լվացարանների, խոհանոցակոնքերի և ցնցուղարանների տաք ջրամատակարարման համար, որը իրականացվում է մանկապարտեզում նախագծվող արևային տաք ջրամատակարարման համակարգի միջոցով : Նախագծում նախատեսված են ցիրկուլյացիոն ջրագծեր : Ընդունված են $d=32$ -20մմ պոլիպրոպիլենային խողովակներ և ձևավոր մասեր: Անհրաժեշտ տեղերում նախատեսված է փակող արմատուրա: Ներքին ցանցի խողովակները ջերմամեկուսացված են ռետինե 25-20մմ խողովակներով, ցանկալի է բոլոր խողովակները մոնտավել հատակի շերտի և սան. հանգույցների հախճապների տակ:

3. Կենցաղային կոյուղի (K1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի սան. տեխնիկական սարքերից, խոհանոցակոնքերից և հոսակներից կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Կեղտաջրերի հեռացումը կատարվում է ինքնահոս , կոյուղու 2 թողարկներով (K1-1, K1-2) : Կեղտաջրերը հեռացվում են ներտարածքային կոյուղու ցանցի դիտահորեր : Ներքին ցանցում ընդունված են կոյուղու պլաստմասե $\Phi 100$ - 50մմ խողովակներ և պլաստմասե ձևավոր մասեր:

Ներտարածքային ցանցեր

1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի ջրամատակարարման կարիքների համար: Ջրամատակարարումը իրականացվում է համայնքին պատկանող մանկապարտեզին հարակից խորքային հորի բաժանարար խողովակից, համաձայն տեխնիկական պայմանի , $de=40$ մմ պոլիէթիլեն PE-100 բարձր խտության խմելու ջրի ճնշումային խողովակներով, որոնց համար խրամուղում ստեղծվում է 10սմ հաստության ավազի նախապատրաստական և $de+15$ սմ ավազի պաշտպանիչ շերտեր: Սահմանազատման կետում (մանկապարտեզի տարածքում) նախատեսված է ջրաչափական հոր $720 \times 720 \times 600$ (h)՝ ջրաչափական հանգույցով (D=32մմ ջրաչափ, D32մմ ֆիլտր և D32մմ փական):

2. Կենցաղային կոյուղի (K1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի կեղտաջրերը ներտարածքային ցանցով հեռացման համար: Կեղտաջրերը ինքնահոս հեռացվում և լցվում են տարածքում գոյություն ունեցող կեղտաջրերի ընդունիչ հորի մեջ: Ներտարածքային ցանցում նախատեսված են կոյուղու պոլիէթիլեն բարձր խտության գոֆոխողովակներ $\Phi 150$ - 200մմ, որոնց համար խրամուղում ստեղծվում է 10սմ հաստության ավազի նախապատրաստական և $de+15$ սմ ավազի պաշտպանիչ շերտեր: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսված են կոյուղու դիտահորեր: Հորերը կլոր կտրվածքի են, ե/բ էլեմենտներից՝ ե/բ ծածկի սալերով և միաձուլ բետոնե առվակներով:

Հողային աշխատանքները և միացումները գոյություն ունեցող ցանցերին կատարել համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ: